

թ. 1714 «Արտաքին գրոց» մէկ մասը «մինչեւ ի Պերիարմենիասին վերջն» եւ կը վախճանի 1636ին «ի տիս երիտասարդութեան» «ի յանապատն Ըստաթէի» :

13. Յովհաննէս արեղայ կը ծաղկէ 1624ին ճաշոց գիրք մը Տաթեւի Անապատին մէջ Արիստակէս վարդապետի առաջնորդութեան օրով¹² :

14. Մարգարայ երէց 1630ին կ'օրինակէ Աւետարան մը Կողպ գիւղին մէջ Կիրակոս եպիսկոպոսի օրով¹³ :

15. Յովհաննէս երէց Շատախցի ի Վերին Զակամ կ'օրինակէ նոյնպէս Աւետարան մը 1633ին¹⁴ :

Գրական այս շարժման գլխաւոր ղեկավարն էր առանց տարակուսի Մովսէս վարդապետ, որ իբրեւ աշակերտ Սրապիոն-Գրիգոր Ուրհայեցոյ եւ Գրիգոր Կեսարացոյ, սրմէ ընդունած էր վարդապետական իշխանութիւնը, կը վայելէր ամէնէն աւելի ճոխութիւն ժամանակակից «գրոց ուսուցիչներու» մէջ: Գրիչ մը՝ Մելքիսէթ երէց իբր 1621ին կ'օրինակէր Մաշտոց մը «ի ժամանակս մեծ բարունապետին մեծին Մովսէսի եւ Սարգիս պարոնտէր հօր»: Այսպէս նաեւ ուրիշ ժամանակակից մը կ'օրինակէ Ժողովածոյ գիրք մը «առ յերկիրս Աճանան, ի գուղս Խնկանց ընդ

¹² Աճառեան, անդ, էջ 114:

¹³ Զեռ. Երեւանի Պետ. Թանգարանի, Թ. 147:

¹⁴ Արձագանք, 1888, էջ 162. Բարխուդարեան, Արցախ, էջ 333—334: